ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՌՈՒԲԵՆ ԱՋԻԶԲԵԿՅԱՆ

Ծտպատերազմյան ժամանակաշրջանում Սովետական Հայաստանի արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալը շարունակում էր աճել ավելի բարձր տեմպերով, քան ՍՍՀՄ-ում։ Այսպես, եթե 1945 թ. այն ՍՍՀՄ-ում և ՀՍՍՀ-ում 1940 թ. համեմատությամբ աճել էր 0,9 անգամ, 1965 թ.՝ ՍՍՀՄ-ում 7,9, իսկ ՀՍՍՀ-ում 12 անգամ, ապա 1975 թ. այն համապատասխանաբար ավելացել էր 17 և 31 անգամ[1]։ Հայաստանի արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը պայմանավորված են ՀՍՍՀ-ին բնորոշ մի շարք առանձնահատկություններով, որոնք են՝ հանրապետության աշխատանքային ռեսուրսների արագ ավելացումը, լեռնային տեղանքը (որը սահմանափակում է հանրապետության գյուղատնտեսության զարգացման հնարավորությունները) օգտակար հանածոների առատությունը, ինչպես նաև որակյալ բանվորական ու ինժեներատեխնիկական կադրերի առկայությունը։

1960-ական թվականներից սկսած Հայաստանի արդյունաբերության զարգացման ասպարեզում նշմարվեցին որակական փոփոխություններ, որոնք պայմանավորված էին մեքենաշինության ճյուղերի հետագա արագ զարգացմամբ, քիմիական արդյունաբերության մեջ բնական գազի լայն օգտագործմամբ, սինթետիկ մանրաթելի, առաձգական և այլ քիմիական նյութերի արտադրության ընդլայնմամբ, ջերմաէլեկտրակայանների կառուցմամբ և այլն։

Հանրապետության կուսակցական և տնտեսական մարմինները առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում տեխնիկական առաջընթացին և որակյալ կադրերի պատրաստմանը։ Բավական մեծ աշխատանք կատարվեց արտադրության մեքենայացման և ավտոմատացման, տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման և գիտության ու տեխնիկայի վերջին նվաճումներն արտադրության մեջ անմիջապես ներդնելու ուղղությամբ։ Զգալիորեն ավելացավ արդյունաբերության առաջավորների թիվը։ Եթե 1960 թ. հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում ներդրվեցին 9,4 հազար նորարարական առաջարկներ, ապա 1965 թ.՝ 13,1 հազար, 1970 թ.՝ 15,3 հազար, իսկ 1975 թ.՝ 17,6 հազար[2]։ Այդ ներդրումներից մեկ տարվա հաշվով տնտեսված գումարը համապատասխանաբար կազմեց 8,1, 17,7, 24,8 և 35,6 մլն. ռուբլի[3]։

Չնայած ժողովրդական տնտեսության զարգացման արագ տեմպերին, ինչպես հայտնի է, հանրապետության արդյունաբերության և շինարարության մեջ 1960-ական թվականների կեսերին նկատվեցին խոշոր թերություններ,

---

1 «Народное хозяйство СССР за 60 лет», М., 1977, էջ 177։

2 «Народное хозяйство Армянской ССР в 1977 г.», Ереван, 1978, էջ 35։

3 Նույն տեղում։

որոնք ՀԿԿ XXIII համագումարում (1964 թ. հունվար) դարձան լուրջ քննության առարկա։ Համագումարն ընդգծեց, որ արդյունաբերական ձեռնարկություններում կազմակերպչական աշխատանքների հետագա բարելավման և մասսաների ստեղծագործական ակտիվության զարգացման համար անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել յուրաքանչյուր ձեռնարկության աշխատանքների տեխնիկատնտեսական ցուցանիշները։ Հատուկ ուշադրություն դարձվեց ետ մնացող ձեռնարկություններում ղեկավարման մեթոդների և ձևերի կատարելագործման խնդիրներին։ Բայց միայն տնտեսական ռեֆորմի շնորհիվ էր, որ երբ ՍՍՀՄ տնտեսությունն անցավ տնտեսավարման նոր սկզբունքների, որոնք հաստատվեցին ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումում (1965) և ամրապնդվեցին կուսակցության XXIII համագումարում (1966), նոր հեռանկարներ բացվեցին հանրապետության տնտեսության հետագա համաչափ զարգացման համար։

Նոր տնտեսավարության սիստեմն առավելապես ազդեց մանր ձեռնարկությունների միացման ճանապարհով ստեղծված խոշոր ձեռնարկությունների և արտադրական միավորումների վրա։ Վերջիններիս հանդես գալը ժողովրդական տնտեսության ճյուղերում նոր երևույթ էր, որը լինելով գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում արտադրության մասնագիտացման և կենտրոնացման հետևանք, նպաստում էր արտադրության ղեկավարման կատարելագործմանը։ Տնտեսական ռեֆորմից հետո այդ միավորումների մի մասը կազմալուծվեց, քանի որ տարածքային սիստեմով կառավարելուց հրաժարվելը հնարավորություն տվեց արդյունաբերության տվյալ ճյուղի սահմաններում ստեղծելու ավելի ռացիոնալ արտադրական կապեր։ Բայց այդպիսի միավորումների ստեղծման սկզբունքը լիովին արդարացրեց իրեն։

Երկրում գիտաարտադրական միավորումների զարգացմանը հատկապես նպաստեց ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1968 թ. «Գիտական կազմակերպությունների աշխատանքի արդյունավետության բարձրացման և ժողովրդական տնտեսության մեջ գիտության ու տեխնիկայի նվաճումները արագ օգտագործելու միջոցառումների մասին» որոշման կենսագործումը[1]։

Կուսակցության և կառավարության վերոհիշյալ միջոցառումների իրագործումը դրական արդյունքներ տվեց նաև ՀՍՍՀ-ում։ 1975 թ. տվյալներով կազմակերպվել էին 32 արտադրական, գիտաարտադրական և արտադրատեխնիկական միավորումներ, որոնք թողարկում էին հանրապետության արդյունաբերական արտադրանքի 26,6%-ը[5]։

Հանրապետության ինդուստրիալ առաջընթացը հանգեցրեց արդյունաբերության արագ զարգացմանը։ Այսպես, 1970 թ. «Ա» խմբի արտադրանքը 1965 թ. համեմատությամբ ավելացավ 168, իսկ «Բ» խմբինը՝ 183%-ով։ 1975 թ. աճը համապատասխանաբար կազմեց 232 և 267 %[6]։ Ինչպես տես-

---

4 «Справочник партийного работника», вып. 9, М., 1969, էջ 257—258։

5 «Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVI համագումարին», Երևան, 1976, էջ 16։

6 «Народное хозяйство Армянской ССР в 1976 г.», Ереван, 1977, էջ 44։

նում ենք, 1960-ական թվականների երկրորդ կեսից ՀՍՍՀ-ում սպառման ապրանքներ թողարկող արդյունաբերության ճյուղերի արտադրանքը («Բ» խումբ) աճում էր ավելի բարձր տեմպերով, քան այն ճյուղերինը, որոնք արտադրում էին արտադրության միջոցներ («Ա» խումբ)։ Սովետական Հայաստանը միութենական այն հանրապետություններից է (Վրաստանի, Ադրբեջանի և Տաջիկստանի հետ միասին), որտեղ աճման տեմպերով «Բ» խումբը գերազանցում է «Ա» խմբին։ Այսպես, եթե 1965 թ. «Ա» խմբի տեսակարար կշիռը հանրապետության ամբողջ արդյունաբերական արտադրանքի մեջ կազմում էր 70, իսկ «Բ» խմբինը 30%, ապա 1970 թ.՝ համապատասխանաբար 68 և 32%, իսկ 1975 թ.՝ 67 և 33%[7]։

Համամասնության նշված փոփոխությունները, որոնք վկայում են ժողովրդի բարեկեցության աճը, հարկավ, չէին նշանակում, թե ծանր արդյունաբերության նկատմամբ ուշադրությունը թուլացել է։ Ավելին, 1970-ական թվականները դարձան ՀՍՍՀ ինդուստրիալ զարգացման նոր փուլ։ Հայաստանում 1975 թ. արդեն գործում էին 636 արդյունաբերական ձեռնարկություններ[8], իսկ արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության ամբողջ հասարակական արտադրության մեջ հասավ 70%-ի[9]։ 1975 թ. հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 1940 թ. մակարդակը գերազանցում էր ավելի քան 30,8 անգամ[10]։

Սակայն հարկ է նշել, որ հանրապետության արդյունաբերական արտադրանքի աճի հետ մեկտեղ 1970-ական թվականներին այդ բնագավառում առկա էին նաև մի շարք լուրջ թերություններ։ Մասնավորապես, առանձին ճյուղեր չէին ապահովում առաջադրանքների կատարումը, դանդաղել էին աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը, լուրջ սխալներ էին թույլ արվում արտադրության մեջ գիտատեխնիկական նվաճումների ներդրման գործում։ Այս շրջանում արտադրության մեջ ձեռքի աշխատանքը դեռևս զգալի տեսակարար կշիռ ուներ. 1975 թ. մեքենաշինական և մետաղամշակման ձեռնարկություններում այն կազմում էր 47,1%, սննդի արդյունաբերությունում՝ 40%, թեթև արդյունաբերության մեջ՝ 43%[11]։ Նշված թերությունների վերացումը միշտ էլ գտնվում է հանրապետության կուսակցական և սովետական մարմինների ուշադրության կենտրոնում, որոնք ակտիվ աշխատանք են կատարում այդ ուղղությամբ։

Հանրապետության արդյունաբերության հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ ՀԿԿ Կենտկոմի 1974 թ. նոյեմբերյան պլենումը, որը տնտեսական և կուլտուրական շինարարության ղեկավարման գործում բացահայտեց լուրջ թերություններ։ ՀԿԿ Կենտկոմի հունվարյան, այնուհետև հուլիսյան (1976) պլենումներում, ինչպես նաև Հայաստանի կոմկուսի XXVI համագումարում խորը վերլուծության ենթարկվեցին այն թերությունները, որոնք արգելակում էին ժողովրդական տնտեսության զարգացումը և ցույց տրվեցին դրանց վերացման ուղիները։

---

7 «Народное хозяйство Армянской ССР в 1975 г.», Ереван, 1976, էջ 48։

8 Նույն տեղում, էջ 45։

9 «Լենինյան ուղիով», 1975, № 11, էջ 5։

10 «Народное хозяйство Армянской ССР в 1975 г.», էջ 48։

11 «Լենինյան ուղիով», 1975, № 2, էջ 9։

ՍՄԿԿ Կենտկոմը և սովետական կառավարությունը միշտ էլ մեծ ուշադրություն են ցուցաբերել մեր հանրապետության տնտեսության հետագա զարգացման նկատմամբ։ Դրա վառ ապացույցներից է «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1975 թ. ապրիլի 16-ի որոշումը։ Այդ որոշման մեջ մասնավորապես նշվում է, որ հանրապետության արդյունաբերության հետագա զարգացումը պետք է իրականացվի նրա կառուցվածքի արմատական կատարելագործման, ոչ նյութատար և արտադրության բարձր կուլտուրա պահանջող աշխատատար արդյունաբերական ճյուղերի (էլեկտրոնային, ռադիոտեխնիկական, սարքաշինական, էլեկտրատեխնիկական, կապի միջոցների արտադրության) արագ զարգացման ճանապարհով[12]։

1960—1975 թթ. Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացման մասին պատկերացում է տալիս ստորև բերվող աղյուսակը[13]։

Հասարակական համախառն արտադրանքն ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի (տոկոսներով)

Հասարակական համախառն արտադրանքը	1900 թ.	1965 թ.	1970 թ.	1975 թ.
Ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի	100	100	100	100
Արդյունաբերություն	66,7	66,7	66,7	67,3
Գյուղատնտեսություն	14,1	14,0	12,4	11,4
Շինարարություն	11,5	12,2	13,8	12,9
Տրանսպորտ և կապ	2,2	1,8	1,7	2,3
Առևտուր, մթերումներ, նյութա-տեխնիկական մատակարարում և այլն	5,5	5,3	5,4	6,1

Արդյունաբերության ճյուղերից հատկապես բարձր տեմպերով էին զարգանում մեքենաշինությունը և մետաղամշակումը։ Վերջին 10—15 տարիների ընթացքում հանրապետությունում առանձնապես բուռն զարգացում ապրեց մեքենաշինական արդյունաբերությունը, որի տեսակարար կշիռը հանրապետության ամբողջ արդյունաբերության մեջ 1965 թ. 21%-ից 1975 թ. հասավ 28,2%-ի[14]։ Նույն ժամանակահատվածում մեքենաշինության արտադրանքի ծավալն ավելացավ 3,9 անգամ[15]։

ՀՍՍՀ-ում մեքենաշինական արդյունաբերության զարգացումը կարևոր դեր խաղաց հանրապետության աշխատունակ բնակչությանը արտադրության մեջ ներգրավելու (հատկապես փոքր քաղաքներում և շրջաններում), ինչպես նաև բարձրորակ բանվորական և ինժեներատեխնիկական կադրերի պատրաստման գործում։ Հանրապետության տարբեր շրջաններում մեքենաշինական խոշոր ձեռնարկությունների մասնաճյուղերի ստեղծումը խթանում է նաև միջին ու մանր քաղաքների, ինչպես նաև գյուղերի արդյունաբերական արագ զարգացմանը։ Այս երևույթը ոչ միայն կարևոր նշանակություն ունի մեկ կամ մի քանի քաղաքներում հանրապետության բնակչության անհամաչափ

12 Նույն տեղում, 1975, № 8, էջ 21։

13 «Народное хозяйство Армянской ССР, юбилейный статистический ежегодник к 60-летию Великого Октября», Ереван, 1977, էջ 20։

14 Ա. Մ. Կիրակոսյան, Ինդուստրիալ Հայաստան, Երևան, 1977, էջ 46։

15 «ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում», Երևան, 1972, էջ 146։

կենտրոնացումը վերացնելու համար, այլև որոշ չափով խոչընդոտում է աշխատունակ բնակչության հոսքը միջին և մանր քաղաքներից ու հատկապես գյուղական բնակավայրերից դեպի մեծ քաղաքները։ Դա լայն հնարավորություն է տալիս տեղերում օգտագործելու լրացուցիչ աշխատանքային ռեսուրսները։ Տվյալ դեպքում շեշտը դրվում է այնպիսի արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման վրա, որոնցում մեծ չափով օգտագործվում է ձեռքի աշխատանքը (ժամացույցի, սարքաշինական, էլեկտրատեխնիկական գործարաններ և այլն)։ Ելնելով հենց այս հանգամանքից, Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և հանրապետության կառավարությունը իրագործել և իրագործում են մի շարք միջոցառումներ՝ արդյունաբերական, առաջին հերթին մեքենաշինական ձեռնարկություններն առավել արդյունավետ տեղաբաշխելու համար։ Դրա շնորհիվ նկատելիորեն ընդարձակվել է մեքենաշինական ձեռնարկությունների տեղաբաշխման ցանցը. դրան մեծապես նպաստեց նաև համեմատաբար քիչ էներգատար և ջրատար նախաարտադրական ու հավաքման տեղամասերի կազմակերպումը տեղերում։ Վերջիններս չեն պահանջում հատուկ պայմաններ և զբաղեցնում են համեմատաբար փոքր տարածություններ։

Մեքենաշինական արդյունաբերության ռացիոնալ տեղաբաշխման մասին է վկայում հետևյալ փաստը։ Եթե 1960-ական թվականներին մեքենաշինական ձեռնարկությունները հիմնականում տեղաբաշխված էին Երևանում, Լենինականում և Կիրովականում, ապա 1970-ական թվականներին դրանց ցանցը ընդարձակվեց։ Նման ձեռնարկություններ կամ մասնաճյուղեր ստեղծվեցին փոքր քաղաքներում, քաղաքատիպ ավաններում և գյուղական բնակավայրերում։ Ներկայումս մեքենաշինությունը գրանցում է ստացել 17 քաղաքներում և 27 շրջաններում։ Արդեն 1975 թ. մեքենաշինական ձեռնարկությունների միայն մասնաճյուղերը շրջաններում հասել էին 48-ի[16]։

Հանրապետության տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի քիմիական արդյունաբերությունը։ 1960-ական թվականները աչքի ընկան Սովետական Հայաստանի քիմիական արդյունաբերության մեծ վերելքով։ Այդ թվականների կեսերին հանրապետության քիմիական արդյունաբերության արտադրանքի ծավալը, 1958 թ. համեմատությամբ, արդեն ավելացել էր 3,1 անգամ[17]։ Զարգացած սոցիալիզմի պայմաններում Հայաստանի քիմիական արդյունաբերությունը շարունակում է զարգանալ բարձր տեմպերով։ Բավական է նշել, որ 1970 թ. նրա արտադրանքի ծավալը, 1950 թ. համեմատությամբ, ավելացավ 19 անգամ, իսկ 1976 թ.՝ 28,3 անգամ[18]։

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՍՍՀ-ում արագորեն զարգանում էր նաև գունավոր մետալուրգիան։ 1960—70-ական թվականներին երևան եկան բազմաթիվ նոր արտադրատեսակներ։ Գիտության և տեխնիկայի նվաճումների լայն ներդրման շնորհիվ ներկայումս գունավոր մետալուրգիան դարձել է Հայաստանի արդյունաբերության առաջավոր ճյուղերից մեկը։ 1970-ական թվականներին մոլիբդենի կոնցենտրատի և ռաֆինացված պղնձի արտադրությամբ ՀՍՍՀ-ն միութենական հանրապետությունների մեջ համապատասխանաբար գրավում էր երկրորդ և երրորդ տեղերը։ Հանրապետությունում նոր հիմքերի վրա դրվեց ոսկու արդյունահանումը։

---

16 Ա. Մ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 49։

17 «Народное хозяйство Армянской ССР в 1965 г.», Ереван, 1966, էջ 38, 39։

18 «Народное хозяйство Армянской ССР в 1976 г.», էջ 42։

Նշված ճյուղերի, ինչպես նաև ամբողջ արդյունաբերության զարգացման հիմքն էր ՀՍՍՀ էներգետիկ բազայի հետագա ընդլայնումը։ 1960—70-ական թվականներին արմատապես փոխվել է հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը։ Եթե մինչև 1960-ական թվականները ՀՍՍՀ-ում էլեկտրաէներգիան հիմնականում արտադրվում էր հիդրոէլեկտրակայանների կողմից, սակայն այժմ հանրապետության էլեկտրաէներգիայի մեծ մասը տալիս են ջերմաէլեկտրակայանները և Հայկական ատոմակայանը, որի 440 հազ. կիլովատ-ժամ կարողությամբ առաջին հերթը գործարկվեց 1976 թ.

Էներգետիկ հզոր ու կայուն բազայի շնորհիվ մեծ չափերով աճեց աշխատանքի էլեկտրազինվածությունը, որն իր հերթին նպաստեց արդյունաբերության տեխնիկական առաջընթացին։ Լայն թափ ստացան առաջավոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ինտենսիվ ներդրումը, արտադրական պրոցեսների ավտոմատացումն ու մեքենայացումը։ Միայն 9-րդ հնգամյակի տարիներին հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում ներդրվել է ավելի քան 1400 կարևորագույն նոր տեխնիկական միջոցառում, այդ թվում 405-ը՝ արդյունաբերական արտադրանքի նոր տեսակների յուրացման ուղղությամբ, 410-ը՝ առաջավոր տեխնոլոգիայի ներդրման, 240-ը՝ արտադրական պրոցեսների մեքենայացման և 120-ը՝ ավտոմատացման ուղղությամբ և այլն։

Գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների լայն ներդրումը նպաստում է հանրապետության խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում, արտադրամասերում և տեղամասերում արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացմանն ու ավտոմատացմանը, որի հետևանքով կրճատվում է ձեռքի ծանր աշխատանքով զբաղված բանվորների քանակը և ավելանում է մեքենայացված աշխատանքով զբաղվածներինը։

Ինդուստրիալ աննախադեպ զարգացումն ուղեկցվում է Սովետական Հայաստանի քաղաքների աճով, ավելանում է քաղաքային բնակչությունը։ ՀՍՍՀ-ում 1976 թ. հաշվվում էին 57 քաղաքներ և քաղաքատիպ ավաններ, որոնցում ապրում էին 1,806 հազ. մարդ, այսինքն՝ բնակչության մոտ 64%-ը[20]։ Եթե մինչպատերազմյան հնգամյակների տարիներին արդյունաբերական շինարարությունը հիմնականում կատարվում էր Երևանում, Լենինականում և մասամբ Կիրովականում, ապա զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում զգալի ուշադրություն է հատկացվում մանր և միջին քաղաքներին, որի շնորհիվ վերջիններիս բնակչության աճի տեմպերը սկսեցին գերազանցել Երևանի և Լենինականի բնակչության աճի տեմպերին[21]։ Նոր արդյունաբերական համալիրներ կառուցվեցին Հրազդանում, Աբովյանում, Ղափանում, Էջմիածնում, Արարատում, Դիլիջանում, Կամոյում և հանրապետության այլ քաղաքներում ու շրջաններում։ Դրա հետևանքով Երևանի, Լենինականի և Կիրովականի բնակչության բաժինը հանրապետության քաղաքային բնակչության ընդհանուր թվաքանակում մի փոքր նվազեց[22]։ Եթե ՍՍՀՄ-ում քաղաքային բնակչու-

19 Ա. Մ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 35։

20 «Народное хозяйство Армянской ССР в 1975 г.», էջ 8—9։

21 «Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմունիստական կուսակցության XXII համագումարին», Երևան, 1961, էջ 12։

22 «Население союзных республик», М., 1977, էջ 276։

թյունը հիմնականում ավելանում է բնական աճի և գյուղական բնակչության հոսքի հաշվին, ապա ՀՍՍՀ-ում աճի աղբյուր են հանդիսանում նաև այլ հանրապետություններից և արտասահմանից եկածները։

Զարգացած սոցիալիզմի պայմաններում ՀՍՍՀ-ում, ինչպես և ամբողջ ՍՍՀՄ-ում միաժամանակ շարունակվում է բանվոր դասակարգի թվաքանակի աճման պրոցեսը։ 1960 թ. ՍՍՀՄ-ում բանվորների թվաքանակը (ներառյալ կրտսեր սպասարկող անձնակազմը և պահպանության աշխատողները) կազմում էր 45896 հազ. մարդ, ՀՍՍՀ-ում՝ 301 հազ. մարդ, 1970 թ. ՍՍՀՄ-ում՝ 64269 հազ. և ՀՍՍՀ-ում՝ 588 հազ. մարդ, իսկ 1975 թ. համապատասխանաբար 71642 հազ. և 692 հազ. մարդ[23]։ Այս տվյալներից երևում է, որ եթե ՍՍՀՄ-ում բանվորների թվաքանակը 1960—1975 թթ. ավելացել է 1,5 անգամ, ապա ՀՍՍՀ-ում՝ ավելի քան 2 անգամ։

Հայաստանի բանվոր դասակարգի աճի բարձր տեմպերը պայմանավորեցին բանվորների տեսակարար կշռի բարձրացումը հանրապետության զբաղված բնակչության մեջ։ Վերջինս կարևոր որակական առաջընթաց էր հանրապետության դասակարգային կառուցվածքում, քանի որ այն նպաստեց հասարակական կյանքում բանվոր դասակարգի դերի էլ ավելի բարձրացմանը։

1959 թ. բանվորների տեսակարար կշիռը ՀՍՍՀ զբաղված բնակչության մեջ կազմում էր 39,3%, 1970 թ.՝ 56,3%[24]։ Այս ցուցանիշով ՀՍՍՀ-ը 1970 թ. միութենական հանրապետությունների մեջ գրավում էր 5-րդ տեղը (Ղազախական ՍՍՀ-ից, ՌՍՖՍՀ-ից, Էստոնական և Լիտվական ՍՍՀ-ներից հետո)։

Հատկապես արագ է աճում գյուղատնտեսական բանվորների ջոկատը, որն այժմ կազմում է հանրապետության բանվոր դասակարգի հինգերորդ մասը։ Միաժամանակ նվազում է բանվոր դասակարգի ինդուստրիալ կաղմի տեսակարար կշիռը։ Այսպես, եթե հանրապետության արդյունաբերության մեջ բանվորների և ծառայողների տարեկան միջին թվաքանակը 1960 թ. կազմում էր 33,3, տրանսպորտում՝ 8, շինարարությունում՝ 12, իսկ գյուղատնտեսության մեջ՝ 8,6%, ապա 1975 թ. այն համապատասխանաբար կազմում էր՝ 31,7, 6,6, 10,1, և 12,1%[25]։ Այս տեղաշարժը բացատրվում է գյուղում պետական սեկտորի ընդլայնմամբ. 1960—1975 թթ. հանրապետությունում սովխոզների թիվը ավելացավ մոտավորապես 4,3 անգամ, 83-ից հասնելով 358-ի[26]։ ՀՍՍՀ-ում բանվոր դասակարգի գյուղական ջոկատի աճի բարձր տեմպերը բացատրվում են նաև նրանով, որ հանրապետության գյուղատնտեսության մեջ գիտատեխնիկական առաջընթացը դեռևս չի հասել այնպիսի մակարդակի և չի ընդգրկում այնպիսի մասշտաբներ, ինչպես արդյունաբերության և շինարարության մեջ է։ Հետևաբար, գյուղատնտեսության հետագա ինդուստրացումը կազդի հանրապետության գյուղատնտեսական բանվորների քանակական փոփոխությունների վրա։

Ինչպես ամբողջ ՍՍՀՄ-ում, այնպես էլ ՀՍՍՀ-ում բանվորների հիմնական մասը զբաղված է նյութական արտադրության ճյուղերում։ 1975 թ. գրանցում

---

23 «Народное хозяйство СССР за 60 лет», М., 1977, էջ 467։

24 «Итоги Всесоюзной переписи населения 1970 г.», т. 5, М., 1973, էջ 26—33։

25 «Труд в Армянской ССР», Ереван, 1976, էջ 32։

26 «Народное хозяйство Армянской ССР в 1977 г.», էջ 115։

զբաղված էր հանրապետության զբաղված բնակչության 72,6%-ը[27]։ Սակայն արտադրողական ուժերի զարգացման ներկա մակարդակը, գիտատեխնիկական հեղափոխության լայն տարածումը, արտադրական պրոցեսների մեքենայացումն ու ավտոմատացումը հանգեցնում են զբաղված բնակչության վերաբաշխման նյութական արտադրության ոլորտում զբաղվածների տեսակարար կշռի նվազմանը և նրանց թվաքանակի ավելացմանը՝ ոչ արտադրական ոլորտներում։ Այդ են վկայում հետևյալ տվյալները։ Եթե 1960 թ. ՀՍՍՀ-ում նյութական արտադրության ճյուղերում հաշվվում էր զբաղված բնակչության 81,7%-ը, իսկ ժողովրդական տնտեսության ոչ արտադրական ճյուղերում՝ 18,3%-ը, ապա 1975 թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմում էին 72,6 և 27,4%[28]։

Հանրապետության ժողովրդական տնտեսության ոչ արտադրական ճյուղերում հատկապես բարձր տեմպերով է ավելանում բնակչության այն մասի տեսակարար կշիռը (այդ թվում, իհարկե, և բանվորների), որը զբաղված է առողջապահության, սոցիալական ապահովության, լուսավորության, կուլտուրայի և գիտության մեջ։ Այսպես, եթե 1960 թ. զբաղված բնակչության տեսակարար կշիռը նշված ոչ արտադրական ճյուղերում կազմում էր 12,7%, իսկ մնացած ոչ արտադրական ճյուղերում 5,6%, ապա 1975 թ.՝ համապատասխանաբար 19,1 և 8,3%[29]։ Նմանօրինակ փոփոխությունները հատուկ են զարգացած սոցիալիստական հասարակությանը։ Արդի ժամանակաշրջանում ժողովրդական տնտեսության ոչ արտադրական ճյուղերում ձևավորվում է բազմաքանակ և բարձրորակ բանվոր դասակարգի մի նոր ջոկատ, որի զարգացումը վկայում է հանրապետության ամբողջ բանվոր դասակարգի ընդհանուր կուլտուրատեխնիկական մակարդակի աճի մասին։

Հասարակական աշխատանքի վերաբաշխման պրոցեսը հօգուտ ոչ արտադրական ոլորտի՝ հասարակական զարգացման օրինաչափ տենդենց է, բայց զարգացած սոցիալիզմի պայմաններում այն ունի իր առանձնահատկությունները։ Այստեղ վերաբաշխմանը նպաստում են ոչ միայն գիտատեխնիկական առաջընթացը, այլև կուսակցության և կառավարության կողմից կիրառվող միջոցառումները հօգուտ սպասարկման ոլորտի ճյուղերի զարգացման, որը մեծ նշանակություն ունի կոմունիստական շինարարության խնդիրների ընդհանուր լուծման համար։ Դեռևս Կ. Մարքսը նշել է, որ երկրի հարստությունը առաջին հերթին պայմանավորված է նրանով, թե որքան ավելի քիչ է արտադրող բնակչությունը ոչ արտադրողի նկատմամբ[30]։

Արդյունաբերության բուռն զարգացման պայմաններում առավել արագ տեմպերով են զարգանում նրա այն ճյուղերը, որոնք որոշում են գիտատեխնիկական առաջընթացը, դա էլ իր հերթին հանգեցնում է բանվոր դասակարգի ճյուղային կառուցվածքում զգալի փոփոխությունների։ Գիտատեխնիկական առաջընթացը և բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակի աճը զգալի ազդեցություն ունեցան հանրապետության արտադրաարդյունաբերական անձնակազմի վրա։ Բավական է նշել, որ 1975 թ. նրանում արդյունաբե-

---

27 Նույն տեղում, էջ 150։
28 Նույն տեղում։
29 Նույն տեղում։
30 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. I, էջ 214։

ական բանվորների և ծառայողների թվաքանակն ավելացել է մոտ 2,2 անգամ[31]։ Արտադրաարդյունաբերական անձնակազմի առանձին կատեգորիաների վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ամենամեծ փոփոխությունները տեղի են ունեցել ինժեներատեխնիկական աշխատողների թվաքանակում։ Ուսումնասիրվող ժամանակահատվածում հանրապետության արտադրաարդյունաբերական անձնակազմում բանվորների տեսակարար կշիռը կրճատվել է, իսկ ինժեներատեխնիկական աշխատողներինը՝ մեծացել։ Այսպես, եթե 1960 թ. արտադրաարդյունաբերական անձնակազմում բանվորների տեսակարար կշիռը կազմում էր 82,6%, ապա 1975 թ.՝ 80,2%, իսկ ինժեներատեխնիկական աշխատողներինը՝ համապատասխանաբար 8,3% և 11,6%[32]։ ՍՄԿԿ XXIV համագումարում Լ. Ի. Բրեժնևը նշեց. «...գիտատեխնիկական մտավորականության աճի տեմպերը վերջին տարիներս մեզ մոտ սկսել են գերազանցել մյուս բոլոր սոցիալական խմբերի աճի տեմպերին։ Այդ պրոցեսը օրինաչափ է։ Դա արդյունքն է կուսակցության քաղաքականության, որի նպատակն է ըստ ամենայնի արագացնել գիտատեխնիկական առաջադիմությունը, է՛լ ավելի բարձրացնել ժողովրդի կուլտուրան և կրթվածությունը»[33]։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում ՀՍՍՀ արդյունաբերության զարգացման բնորոշ գծերից մեկը բանվոր դասակարգի թվաքանակի և տեսակարար կշռի փոփոխությունն է՝ նրա առանձին ճյուղերում։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բանվորների տեսակարար կշիռը զգալիորեն մեծացել է հանրապետության արդյունաբերության առաջատար ճյուղերում, որոնք կարևոր դեր են խաղում գիտատեխնիկական առաջընթացի արագացման գործում։ Այսպես՝ եթե 1960—1975 թթ. ամբողջ արդյունաբերության մեջ բանվորների թվաքանակը ավելացել է մոտավորապես 2 անգամ, ապա մեքենաշինական ճյուղերում 3,5 անգամ, էլեկտրատեխնիկական, քիմիական և նավթաքիմիական արդյունաբերության մեջ՝ 2,5 անգամ[34]։ Ներկա ժամանակաշրջանում ՀՍՍՀ բանվոր դասակարգի ճյուղային կառուցվածքի փոփոխությունների կարևոր օրինաչափություններից է այն, որ ժողովրդական տնտեսության այնպիսի ճյուղերում, որտեղ գիտատեխնիկական առաջընթացը տեղի է ունենում բուռն տեմպերով (տվյալ դեպքում արդյունաբերության մեջ), բանվոր դասակարգի թվաքանակի աճի տեմպերը նվազում են։ Օրինակ՝ եթե 1960—1965 թթ. հանրապետության արդյունաբերական բանվորների թվաքանակը ավելացել է 45,8, իսկ 1965—1970 թթ. 59,1 հազարով, ապա 1970—1975 թթ.՝ 31,1 հազարով, որի հետևանքով նվազել է նաև արդյունաբերական բանվորների տեսակարար կշիռը (1960 թ. 86,9-ի փոխարեն 1975 թ. դարձել է 83,8%[35])։

Այսպիսով, զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում ՀՍՍՀ բանվոր դասակարգի քանակական փոփոխություններն ունեն հետևյալ հիմնական տենդենցները.

---

31 «Труд в Армянской ССР», էջ 75։
32 Նույն տեղում, էջ 75—76։
33 «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 98։
34 «Труд в Армянской ССР», էջ 60։
35 Նույն տեղում։

1. Բանվոր դասակարգի քանակական աճի բարձր տեմպեր այն ճյուղերում, որոնք պայմանավորում են գիտատեխնիկական առաջընթացը, միաժամանակ բանվոր դասակարգի աճի տեմպերի աստիճանական նվազումը այն ճյուղերում, որոնցում լայնորեն կիրառվում են գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները։

2. Հանրապետության բանվոր դասակարգի ընդհանուր կազմում արդյունաբերության մեջ զբաղված բանվորների թվաքանակի նվազում։

3. Հանրապետության գյուղատնտեսության մեջ բանվորների թվաքանակի ավելացում։

4. Արտադրական և ոչ արտադրական ոլորտներում արտադրողական ուժերի վերաբաշխման հիման վրա, հօգուտ երկրորդի, ավելանում է սպասարկման ոլորտի բանվորների թվի աճը։

Ամփոփելով նշենք, որ հանրապետության բանվոր դասակարգի քանակական փոփոխությունները արտացոլում են ՍՍՀՄ բանվոր դասակարգի զարգացման ընդհանուր օրինաչափությունները։

ИНДУСТРИАЛЬНЫЙ ПРОГРЕСС СОВЕТСКОЙ АРМЕНИИ И КОЛИЧЕСТВЕННЫЕ ИЗМЕНЕНИЯ РАБОЧЕГО КЛАССА В ПЕРИОД РАЗВИТОГО СОЦИАЛИЗМА

РУБЕН АЗИЗБЕКЯН

Резюме

В условиях зрелого социализма неуклонно растет экономический потенциал Советской Армении. Происходят коренные изменения в составе рабочего класса республики, увеличивается численность рабочих. Темпы роста рабочих в Армянской ССР за исследуемый период были выше, чем в СССР в среднем. Наблюдаются высокие темпы роста рабочего класса в тех отраслях, которые обусловливают научно-технический прогресс, п одновременно постепенно снижаются темпы роста рабочих в тех отраслях, где широко применяются достижения научно-технической революции. С увеличением численности всего рабочего класса республики стала снижаться численность рабочих, занятых в промышленности. Увеличивается численность сельскохозяйственных рабочих, а также на основе перераспределения производительных сил в производственных и непроизводственных сферах в пользу второй увеличивается численность рабочих, занятых в сфере обслуживания. Процесс количественных изменений рабочего класса республики отражает общие закономерности развития рабочего класса страны.